

ԱՆՄԵՂՆԵՐՈՒՆ

Ո՛վ դուք տրտում և նրազուն շուշաններ,
Որոնց զեղին մէջ կը ծաղկին երկինքներ.
Կը սիրեմ ձեր անմեղութիւն նախընծայ
Ինչպէս երբեմն եղեմական դարերուն.
Բայց կը դողամ ի տես հրատապ արեւուն,
Որ վիշապի պէս կը դիմէ ձեր վերայ:

Քոյրեր տրտում, արեւուն դէմ մի՛ բանաք
Ձեր բաժակներն անփորձ, գուցէ կիրքը տաք
Տոչորէ՛ ձեզ և քանդէ հմայքդ ոսկեծղի.
Այլ ճակատնիդ հակած աղբիւրն անապակ,
Հրճուեցէ՛ք միշտ, հոն դաշտերուն ամբարփակ՝
Բաշխելով ձեր պայծառութիւնն անուանի:

Դուք բիւրեղեայ գեղեցկութիւն, հրաշքի պէս
Ինկած հողին վրայ, ուր քանդիչ ձեռքեր վէս
Ամէն կողմէ դարանամուտ կը հսկեն
Յափշտակել ձեր գանձերուն ճոխութիւն.
Թողէ՛ք, թողէ՛ք, ո՛հ այս ափերն անկայուն,
Աչքերնուդ մէջ աշխարհներ կան հոգեղէն:

Լուսնի անզօր շողերով
Կը տեսնեմ ես օձախոռիւ
Պարմաններու բանակներ
Եկած հեռու ափերէն
Տենդազալար, հեւասպառ,
Որ դողդոջուն ձեռքերով
Հըպիւ կ'ուզեն ձեր ճակտին.
Ա՛հ, ստերդումի ժամն է այդ,
Վըտանգաւոր ժամը նենգ,
Երբ մամուռն վրայ նստած
Ձեռքեր անցած ձեռքերու՝
Կը խոստանան ու կ'երդնուն...
Փախէ՛ք քոյրեր, մէն մի խօսք
Լուսնի զեղին շողին տակ՝
Հոգեսասան դա՛ւ է, դա՛ւ:

Հ. Մ. Ճ.

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Միսիքար Աբբաօր մահուան 200-ամեայ
Յոբելեանին առթիւ հրատարակուած
«Բազմավէպ»ի Բացառիկ թիւը (7-12,
1949) եւ 1950-ին լոյս տեսած «Գեղունի»ն
ազգային մամուլին մէջ կը շարունակուին
առարկայ ըլլալ լայն գնահատականներու:
Կը շարունակուին հասնիլ մեզի, զանազան
կողմերէ, նաեւ նամակներ՝ ուր բարձրաս-
տիման եկեղեցականներ, գրագէտներ,
փրոֆէսորներ կ'արտայայտեն իրենց հիա-
ցումը: Ահա հոս մաս մը այդ նամակնե-
րէն.

centenaire de la mort du Vénérable Abbé
Mekhitar.

En effet, il convenait on ne peut plus de
fêter un peu partout la mémoire de ce Grand
Fondateur, par des publications et diverses
séances académiques commémoratives com-
me expression de vénération, d'admiration et
d'estime.

Ce grand héros n'a pas été seulement un
bienfaiteur de la Nation Arménienne, mais
aussi un serviteur de la Sainte Eglise....

signé I. G. CARDINAL TAPPOUNI
Patriarche d'Antioche

Beyrouth, le 5 Mars 1951

«ԲԱԶՄԱՎԷՊ» Ի ԲԱՅԱՌԻԿ-ԻՆ ՇՆՐԸ

Հայրական սիրոյ եւ օրհնութեան ող-
ջունիւ... ջերմօրէն կը շնորհաւորենք «Մը-
խիթար» Բազմավէպի բացառիկը որ
յերաւի կը ներկայանայ մեծապէս յաջող
ու փառաւոր «Յուշարձան» մը: Յոյժ
շահեկան յօդուածներ կան որոնք պիտի
կարենան ազդու կերպով հարթել ճանա-
պարհը դէպի ցանկացում երանացումը
մեծ Աբբահօր... մաղթելով որ անդ-
բազոյն ուսումնասիրութիւններ պարզեն
չատ ուրիշ սքանչելի ծաղեր Մեծին Մը-
խիթարայ աստուածարեալ հոգիին, հա-
մակ սէր եւ նուիրում անխոնջ աշխատան-
քով եւ տքնութեամբ ի սպաս Ս. Եկեղեց-
ւոյ եւ Արամեան Ազգիս:

ԿԱՐԳ. ԳՐԻԳՈՐ-ՊԵՏՐՈՍ ԺԵ
ԱՂԱՃԱՆՆԱՆ

Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ

Պէտրութ, 9 Մարտ 1951

Il Cardinale Schuster ringrazia, congratu-
landosi nobile pubblicazione.

Grazie del bel volume sul Ven. Mekhitar...
Volesse Iddio che gli studi copiosi che si
sono fatti e si fanno affrettassero il compi-
mento del processo canonico per la beatifi-
cazione dell'insigne monaco che tanto ha il-
lustrato la Chiesa Armena e l'ha tenuta con-
giunta strettamente a Roma dandoLe tanto
splendore di virtù e di dottrina....

Ft° G. BATTISTA CARD. NASALLI ROCCA
DI CORNELIANO

Arciv. di Bologna

16 Febr. 1951

J'ai été particulièrement sensible à la dé-
licate attention que vous avez eu de m'en-
voyer le numéro spécial de la revue armé-
nienne «Pazmaveb» publié à l'occasion des
célébrations commémoratives du deuxième

Nous venons à recevoir en hommage, le
beau volume que la Congrégation Mechita-
riste a publié à l'occasion de la clôture des
fêtes jubilaires commémoratives du 2ème
Centenaire de la mort du Vénérable Abbé
Mekhitar.

Le Vénérable M. dont la vie apostolique a été si intense et si mouvementée et qui a laissé à l'Eglise Catholique le bel héritage de sa Congrégation florissante, mérite que l'on fasse revivre sa mémoire pour l'édification non seulement de ses enfants mais aussi de l'Eglise universelle, car sa vie durant, il a été un promoteur infatigable de la renaissance intellectuelle, surtout arménienne, comme aussi un apôtre zélé pour la sanctification des âmes.....

signé MAXIMOS IV

Patriarche d'Antioche et de tout l'Orient,
d'Alexandrie et de Jérusalem.

Le Caire, le 26 Février 1951

Il P. Paolo Dezza S. J. Rettore magnifico della Pont. Università Gregoriana, ossequia il Rev. P. (N. N.), e gli porge i più vivi ringraziamenti per il magnifico volume commemorativo che ha avuto la bontà di inviargli in omaggio.....

Roma, 17 Marzo 1951

..... Sono sentitamente grato per il libro che costituisce un interessante e importante dono alla nostra biblioteca frequentata da tanti studiosi, e particolarmente per la gentilezza che ha ispirato tale invio.

Come i festeggiamenti bicentinari del 1950 hanno dato modo di conoscere l'insigne figura del grande Fondatore dell'Ordine Mechitarista, così questo volume eccellente compie e perpetua questa iniziativa, cioè lumeggiare il Ven. Fondatore e trasmettere ad altri questa luce. Mi è di grata soddisfazione vedere come studiosi sia orientali che occidentali abbiano collaborato a questa bella MISCELLANEA, segno questo che l'opera del Ven. Mechitar è sempre più conosciuta e apprezzata.

Voglia il Signore porre anche ufficialmente

sul candelabro della Sua casa questo illustre figlio della Chiesa e della tribolata ma grande ARMENIA.....

Ft° ERNESTO VOGT S. J.

Rettore del Pont. Istituto Biblico

Roma, 14 Marzo 1951

Casa Generalizia dell'Ordine
dei Frati Predicatori

.... Questa opportuna, interessante, preziosa pubblicazione ad onore del grande Abate Mechitar è stata assai gradita dal Rev.mo P. Maestro Generale che mi prega porgere alla P. V. Rev.ma i suoi più sentiti ringraziamenti.....

Ft° P. PATRIZIO PILASTRO, O. P.

Segret. P. Gen.

Roma, 12 Marzo 1951

L'Abate di Montecassino

Molti vivi ringraziamenti per il dono che mi ha fatto della ricca Miscellanea edita in occasione del secondo centenario della morte del Ven. Abate Mechitar, fondatore di questo Ordine che porta il suo nome...

Uomo di Dio, oltre che nell'Apostolato di Religione, ha profuso il suo ingegno multiforme nei campi più disparati della cultura umanistica e della scienza, aprendo al suo popolo la via della rinascita, e lasciando questa, dopo di sé, affidata a buone mani.

Ad una Nazione che, pur nei tempi più avversi della dispersione, ha saputo esprimere dal suo seno simile animatore, Iddio riserba indubbiamente un avvenire...

Ft° ILDEFONSO REA

Ab. e Ord.

Montecassino, 12 Marzo 1951

... Je vous adresse toutes mes félicitations pour ce numéro. L'ouvrage qui représente une somme énorme de travail, se présente bien et fait honneur aux éditeurs. Je souhaite qu'il rencontre le succès qu'il mérite.

J. MUYLDERMANS

Louvain, le 24 Février 1951

Rév.me Père, je vous remercie de tout mon cœur du beau volume commémoratif de l'Abbé Mekhitar que... Je me promets beaucoup de plaisir de la lecture des différents articles...

M. A. v. d. OUDENRIJN O. P.

Fribourg, le 21 Février 1951

1950-ի « ԳԵՂՈՒՆԻ »-ի շուրջ

J'ai reçu avant-hier le magnifique exemplaire de votre nouvelle Illustration Arménienne et je suis très sensible à ce témoignage de fidélité. Vous m'avez beaucoup trop gâté et je ne suis pas habitué à recevoir de mes élèves lointains, plusieurs années après qu'ils ont quitté Paris, d'aussi somptueux cadeaux. L'an dernier, vous m'aviez déjà envoyé le numéro spécial consacré aux trésors artistiques de San Lazzaro dont les chefs-d'œuvre étaient si merveilleusement reproduits. Cette année, vous vous surpassez encore, et il faut que vous soyez techniquement bien équipés pour affronter de telles réalisations.

A côté des tableaux commémorant l'activité de l'Abbé Mekhitar, vous avez fort bien fait d'étendre votre choix aux grandes toiles des maîtres Venitiens, Titien, Bellini, Tintoretto, etc, dont les reproductions sont vraiment remarquables....

JEAN MARIE CARRÉ

Professeur de la littérature comparée,
à la Sorbonne

21 Février 1951
Paris

Մխիթար Աբբահօր երկդարեան յուշարձան «Գեղունի»-ի գեղակերտ հատորին մասին խոստացած էի նոր հրատարակելի «Աստղաբերդ» հանդէսին մէջ արտայայտուելի: Անոր վերապահած էի տպաւորութիւններս, որոնք նպաստաւոր են: Սառնուածքով դուցէ՛ հին արժէքներու եւ փառքերու առաւելագոյն կարեւորութիւնը ընծայողներէն մէկը ըլլալու, սրտազեղ յուզումով թղթատեցի անոր մէկը միւսէն աւելի շահեկան ու հայադրոշմ էջերը: Հիացում ճաշակի ու տպագրութեան, հիացում գեղարուեստական վերարտադրութիւններու եւ նոր երկերու, հիացում յորդական աշխատասիրութեանց, վերլուծումներու եւ գրական էջերու. այս բոլոր հիացումները կը խոռոնուին իրարու ու մեր էութիւնը կը դնեն հեշտօրօր ծփանքներու վրայ: «Գեղունի»-ն բաւական է ինքնին, այն խոր համոզումը ներշնչելու համար՝ թէ ի՞նչ հրաշքներ կրնան գործել վեհատիկն ու իր Մխարանութիւնը հայ մշակոյթի մարդերուն վրայ:

Թորոս Ազատեան

Իսթանպուլ, 2 Մարտ, 1951

Անակնկալ ու ճշմարիտ հաճոյքով էր որ ստացայ «Գեղունի»-ի 1950-ի թիւը, նըւիրուած Մեծ Մխիթարի նուիրական յիշատակին: Գեղարուեստական տպագրութեան անդերազանցելի գործ մը, ուր արուեստի ազնիւ ճաշակն ու ճարտարութիւնը միաձուլուած՝ կը փայլին սքանչելի ներդաշնակութեամբ: Պիտի ուզէի շնորհակալութիւնս արտայայտել դրական եղանակով մը, բայց միակ տրամադրելի միջոցս՝ ջանքս կրնայ ըլլալ, անկէ սպասելու քանի մը օրինակ:

Ա. Անդրէասեան

Խմբ. «Նոր Օր»-ի Ֆրէդնոյ

17 Հոկտ. 1950

Անցեալ տարի դժբախտաբար հիւանդութեանս պատճառով ես չկրցի յղուած մը զրկել «Գեղունի»-ի վերջին բացառիկ

Թիւին համար: Ձեր այդ սքանչելի դործը տեսնելէ յետոյ առաւելապէս կը ցաւիմ որ չկրցի ես ալ գէթ շատ պզտիկ մաս մը ունենալ անոր մէջ:

Անչափ երախտապարտ եմ Ձեզի, որ այսուհանդերձ Դուք բարի էիք եղած ինձ զրկելու օրինակի մը Գեղունի-էն: Սեղանի զարդ է իրապէս: Օտար բարեկամներս անգամ կը հիանան:

Կը մաղթեմ Ձեզ երկար կեանք եւ կատարեալ յաջողութիւն Ձեր այնքան հրմտութեամբ վարած դործը լաւագոյն կերպով առաջ տանելու համար:

Ռ. Դարբինեան

Խմբագրապետ «Հայրենիք»-ի

Պոսթոն, 21 Փետր. 1951

«Գեղունի»-ն հիանալի էր: Հպարտ եմ ըսելու որ Որբունի-ն մինչեւ հոս բերած եմ: Ինչ որ ձեռքէս կու գայ կ'ընեմ որ ամէն հայ ունենայ Գեղունի-ն, ամէն կերպով պարծանք է թէ՛ Ձեզի համար, եւ թէ՛ հայուն համար որ ունի Հաստատութիւն մը որ կրնայ արտադրել ասանկ դործեր:

Վահան Յ. Ալքունեան

Փաղէտանա, 25 Յունուար 1951

Ստացած եմ բացառիկ «Գեղունի»-ն որ բացառիկ գեղեցկութիւն մ'ունի: Թոյլ տրէ՛ք որ շնորհաւորեմ Ձեզ ու «Գեղունի»-ի խմբագրութիւնը այս հիանալի հրատարակութեան առթիւ, որ պատիւ կը բերէ թէ՛ բազմապանծ Միաբանութեանդ եւ թէ՛ անոր մայր հայ ազգին: Սեղանիս վրան է ան, եւ քովս եկող հայ թէ օտարներուն հպարտանքով կը ցուցնեմ դայն: Յուցուցի ի մէջ այլոց ներքին Գործոց Նախարարին, որ բարեկամս է ու հայասէր (այնքան հայասէր որ իր որդւոյն ամուսնութեան առթիւ ուզեց որ եկեղեցին մի միայն հայերէն շարականներ երգուին): Ինքն ալ կը շնորհաւորէ «Գեղունի»-ն:

Տոնթէվիտոյ, 28 Փետր. 1951

Մոնթէվիտոյ, 28 Փետր. 1951

«Գեղունի»-ի սքանչելի հատորը ստացայ մեծ ուրախութեամբ եւ հպարտութեամբ ցոյց կու տամ իմ խտալացի բարեկամներուն իրենց հիացումը դրաւելով:

Թարգման ըլլալով նաեւ ծնողացս երախտաբեր զգացմանց, կը մաղթեմ անմար փայլ այս հսկայ դործին, որ կարենայ կանոնաւոր կերպով լոյս տեսնել միշտ աւելի լաւ, միշտ աւելի մեծ:

Տոնթ. Տիգրան Դահնագարեան

Լոնիկոյ, 8 Մարտ 1951

Ժամանակին ստացած էի Ձեր զրկած 1950-ի «Գեղունի»-ն որ ինձի հիացում եւ զարմանք պատճառած էր. այնքան որ փափաքած էի ճիշտ այդ շրջանին քաղաքիս մէջ կազմակերպուած գիրքերու միջազգային ցուցահանդէսին ներկայացնել մեր վանքին այս հոյակապ դործը:

Տոնթ. Յակոբ Թաշնեան

Թորին, 21 Մարտ 1951

Պատիւն ու հաճոյքը ունեցայ ստանալու բարեյիշատակ Միւթար Աբրահամ մահուան երկհարիւրամեակին նուիրուած Գեղունի-ի օրինակը, զոր ազնիւ փափկանկատութեամբ մը հաճած էիք զրկել իմ հասցէիս:

Արդարեւ գեղարուեստական հոյակապ հրատարակութիւն մըն է ան, մեծ հոգածութեամբ, ձեռնհասութեամբ եւ ամենանուրբ ճաշակով պատրաստուած, եւ փառաւոր Յուշարձան մը՝ Միաբանութեանդ բազմերախտ Հիմնադրին անուան իսկապէս արժանի:

Իմ ջերմ շնորհաւորութիւններս յայտնելով Պատ. Խմբագրութեանդ կատարած այս ճշգրտ աշխատանքին համար, սրտազին շնորհակալութիւններս կը ներկայացնեմ ինձի նուիրուած Գեղունի-ին առթիւ եւ Միաբանութեանդ ազգանուէր ջանքերուն կը մաղթեմ նորանոր յաջողութիւններ:

Ա. Գարակէօզեան

Նիւ Եորք, 5 Ապրիլ 1951



ՀԱՆԳԻՍ ՀՈԳԻՈՅ

Հ. ԹԵՂՈՐ Վ. ՍԻՐՈՒՆԵԱՆ

(1879-1951)



Տարւոյս Փետրուար 22-ին իր մահկանացուն կնքեց Միաբանութեանս վաստակաւոր երէց անդամներէն Հ. Թեղոր Վ. Սիրունեան՝ սուգի մատնելով զամէնքը իր յեղակարծ մահով:

Ծնած Արարիկի 1879-ի 5 Օգոստոսին՝ 15 տարեկանին կը թողուր հայրենի տունը եւ կու գար Ս. Ղազար (25 Սեպտ. 1894) Միւթար արբահօր դաւաններուն մէջ զինուորելու կրօնաւորական եւ քահանայական սուրբ կոչումով՝ իրեն ընկերակից ունենալով իր հայրենակից եւ ազգական

պատանի մը՝ այսօր Ուխտիս անդամ Հ. Արեքսիս Վ. Յովսէփեան:

Հանգուցեալը մկրտութեան սուրբ աւագանէն կոչուած Յակոբ՝ իր վանական սրբեմին հետ (1897) կ'ընտրէր Թեղոր անունը. ինք դաւանէր իր ծանօթ Կէօղիւպէօ-յիւքեան ընտանիքին, յետոյ շնորհալիօրէն հայացուցած Սիրունեան ձեւով՝ ինչպէս ըրած էր իր միւս եղբայրը, Արեքսիս Վ. ը՝ որ ծանօթ է ազգային դրական շրջանակներուն Ծաղկաքաղով (դրական հաւաքածոյ) ու Աւետարաններու աշխարհաբար թարգմանութեամբ:

Հ. Թեղոր Վ. Ուխտիս անդամակցած էր մշտնջենաւոր կապերով եւ -902ի 17 Օգոստոսին քահանայական սուրբ ձեռնադրութիւնն առած իր դասակիցներէն չորս ընկերներու հետ, եւ այնուհետեւ կը սկսէր իր շարժուն եւ դործունեայ կեանքը՝ նախ որպէս ուսուցիչ բնական դիտութիւններու վանքին աշակերտութեան, եւ յետոյ կը զրկուէր Պարտիզակ՝ վարելու համար Միաբանութեանս այդ առաքելաւայրին փոքրիկ դպրոցը եւ քիչ յետոյ Ժողովրդավեպական փափուկ պաշտօնը՝ մինչեւ 1908: Յետ մասնակցելու 1909-ի միաբանական ընդհանուր Ժողովին՝ տարի մը վանքիս տպարանին մէջ կը պաշտօնավարէ եւ 1910-1912ին ալ Մուրաւ-Ռափայէլեան վարժարաններու կալուածներուն մատակարարներուն կ'օժանդակէ Փատուայի մէջ, ուսկից յետոյ Մեծաւորները զինքը կրկին Արեւելք կը զրկեն, այս անգամ դէպի Կ. Պոլիս, եւ հոն 1912-1919 տարիներուն կը նուիրուի ուսուցչական եւ մատակարարական պաշտօններու տեղւոյն մեր հաստատութիւններուն մէջ եւ մեծ կ'ըլլայ իր արդիւնքը 1914-1918 մեծ պատերազմի ընթացքին. միեւնոյն ժամանակ իր սիրալոթար մասնակցութիւնը կը բերէ օժանդակելով մեր կղերին խոստովանահայրութեան պաշտօնով, ցոյց տալով իր առաքելական հոգին եւ եռանդը հաւատացեալներուն հոգին: